

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

- սահմանված ձևի լրացված և ստորագրված դիմում,
- սահմանված ձևի ինքնակենսագրական տվյալներ պարունակող թերթիկ,
- անձը հաստատող փաստաթղթի պատճեն,
- (3x4 չափսի 2 (երկու) լուսանկար կամ լուսանկարի սկան՝ գունավոր, վերջին վեց ամսվա վաղեմության,
- բարձրագույն իրավաբանական կրթություն ստացած լինելը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի, վկայագրի) պատճենը կամ համապատասխան տեղեկանք բուհից Եթե դիմորդի բարձրագույն իրավաբանական կրթություն ստանալը հավաստվում է օտարերկրյա պետությունում տրված ավարտական փաստաթղթով, ապա նշված փաստաթղթի հետ դիմորդը Հանձնաժողովին պետք է ներկայացնի նաև ստացած կրթության ճանաչումն ու համարժեքությունը հավաստող իրավասու մարմնի կողմից տրված փաստաթուղթը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ստացած կրթության համարժեքությունը ճանաչվում է միջազգային պայմանագրով կամ այլ իրավական ակտով,
- ընդունելության քննության մասնակցության վճարի անդորրագրի պատճենը (Եթե անձն ազատված չէ այն վճարելուց):
- հեռավար դիմորդի դեպքում՝ նաև տեղեկանքն առ այն, որ հեռավար դիմորդը վերջին մեկ տարին, այդ թվում՝ դիմելու պահին, Երևան քաղաքից 80 (ութսուն) կմ և ավելին հեռավորության վրա է փաստացի բնակվում
- հատուկ դիմորդի դեպքում՝ առնվազն տասը տարվա փաստաբանի, դատախազի, քննիչի, դատավորի աշխատանքային (մասնագիտական) ստաժ ունենալը հավաստող փաստաթուղթ, *եթե հատուկ դիմորդի կարգավիճակի հիմքը հանդիսանում է համապատասխան աշխատանքային (մասնագիտական) ստաժի առկայությունը*
- հատուկ դիմորդի դեպքում՝ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունենալը հավաստող փաստաթուղթ, *եթե հատուկ դիմորդի կարգավիճակի հիմքը հանդիսանում է համապատասխան գիտական աստիճանի առկայությունը, ինչպես նաև առնվազն հինգ տարվա աշխատանքային (մասնագիտական) ստաժ ունենալը հավաստող փաստաթուղթ*
- հատուկ դիմորդի դեպքում՝ առնվազն 10 (տասը) տարվա իրավաբանի բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում գիտամանկավարժական գործունեության ստաժը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթի պատճենը), *եթե հատուկ դիմորդի կարգավիճակի հիմքը համապատասխան ստաժն է,*
- դատվածության (առկայության կամ բացակայության) վերաբերյալ տեղեկանք: